

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2014 թվականի մարտի 6 ի N 275-Ն որոշման մեջ
փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ
կառավարության որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2019 թվականի N -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 6-Ի N 275-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի
Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի
մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու,
երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը
հաստատելու մասին» N 275-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ա»
պարբերությունում՝ «հիսուն հազար» բառերը, իսկ «բ»
պարբերությունում՝ «հարյուր հիսուն հազար» բառերը փոխարինել
«երեք հարյուր հազար» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ին
(տարածվում է այն դեպքերի վրա, երբ երեխան ծնվել է 2020 թվականի
հուլիսի 1-ին կամ դրանից հետո):
3. Առաջին կամ երկրորդ երեխայի՝ մինչև 2020 թվականի հուլիսի 1-ը
ծնված լինելու դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստը,
Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի
մարտի 6-ի N 275-Ն որոշմամբ սահմանված կարգով, նշանակվում և
վճարվում է՝

1) առաջին երեխայի ծնվելու դեպքում՝ հիսուն հազար դրամ,

2) երկրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ հարյուր հիսուն հազար դրամ: